ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1961 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վ. Ֆ. ԳԼԱԴԿՈՎԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԵՄՈՒԱՐՆԵՐԸ

Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովը 1961 թ. հունիսի 21-ին Հայրենական պատերազմի 20-ամյակին նվիրված Մոսկվայի հանդիսավոր նիստում արտասանած ճառում ոչ միայն երևան հանեց Սովետական Բանակի պատմական հաջողությունների արդյունքները, այլև հստակորեն կողմնորոշեց Հայրենական պատերազմի պատմությամբ զբաղվող գիտնականների և մեմուարներ գրող շատ զինվորականների ուղին։

Պատերազմական մեմուարները, որոնք գրվում են պատերազմին անձամբ մասնակցած, ողջ արհավիրքներն ու հաղթանակի բերկրանքը խորն ապրած մարդիկ, իրենց փաստացիությամբ խիստ անհրաժեշտ են Հայրենական պատերազմի ամփոփ պատմությունն ստեղծելու համար։

Այս առումով նշանակալից է նաև Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Վասիլի Ֆեոդորովիչ Գլադկովի «Դեսանտը էլտիգենում» գիրքը[1], որը «Ռազմական մեմուարներ» սերիայի տակ լույս է տեսել այս տարի Մոսկվայում՝ «Վոենիզդատի» հրատարակությամբ։

Էլտիգենի դեսանտը, որը ղեկավարել է գրքի հեղինակը, Հայրենական պատերազմում մեր զորքերի ցուցաբերած խիզախության, տոկունության ու հաղթելու կամքի վառ դրսևորումներից մեկն էր։ Չնայած Գլադկովի հրամանատարությամբ գործող 318-րդ դիվիզիան, իրենից անկախ պատճառներով, չկարողացավ պահպանել գրաված դիրքերը, բայց ռազմիկների և սպայական կազմի բարձր հայրենասիրությունը, մարտական կոփվածքը, ռազմական գործում ցուցաբերած խելացի մանևրումները, ցամաքից, օդից և ծովից թշնամու օրվա մեջ 5—6 գրոհների կասեցումները ցույց տվեցին, թե ինչի էին ընդունակ երիտասարդ սպաները և շարքային զինվորները, որոնք զրկված էին ամենաանհրաժեշտ ռազմամթերքներից և ուտելիքից։ Օրական ստանալով հարյուր գրամ հաց, 50-ական գրամ երշիկ և ձկնեղեն, նրանք կարողացել են թշնամու ուժերին պատճառել նյութական և մարդկային մեծ կորուստներ։

Գլադկովը դեպքերը նկարագրում է առանձին ջերմությամբ, հագեցած կենդանի, իրական փաստերով, պարզ և դյուրընկալելի։ Հեղինակը կատարում է տրամաբանական եզրահանգումներ, տալիս ռազմական սիտուացիաների, տակտիկական գրոհների, պաշտպանական մանևրների մասնագիտական խոր կռահումներով լեցուն համոզիչ բացատրություններ, բայց միշտ հեռու մնալով անհատական դրվատումներից։ Դիվիզիայի հրամանատարը գրքում միայնակ չէ։ Նա շրջապատված է դեսանտի աչքի ընկնող մարդանցով, որոնց հետ միշտ հաշվի է նստում։ Հաճախ նա ամենաբարդ հարցերի լուծումը տալիս է իր համախոհների գրավոր փաստարկումներով՝ ընթերցողին համոզելով, որ այն,

---

[1] В. Ф. Гладков, Десант на Эльтиген, Воениздат, 1961.

ինչ ուզում է ասել ինքը, ասում են նաև ուրիշները, որոնք անմիջականորեն մասնակցել են, տեսել են և ավելի լավ գիտեն, քան՝ ինքը։

Գլադկովը խոսում է նաև բացերի մասին, բացահայտում է ոչ միայն իր և իր համախոհների թուլությունները, այլև Բանակի և Ստավկայի լուրջ թերությունները։ Եվ այդ բոլորը նա այնքան համոզիչ, խտացրած գույներով է նկարագրում, որ եթե ինքն էլ չհուշի ընթերցողին, վերջինս կհասկանա, այնքան դիպուկ, սլացիկ և տրամաբանական երանգավորումներով են բացահայտված թերությունների երիզները, որոնք կարծես ասեղնագործված են բացարձակ ճշմարտության աչքի ընկնող թելերով։

318-րդ դիվիզիայի հրամանատարական և շարքային կազմը հիմնականում երիտասարդությունն էր, որն իր մարտական փառքի գրավականները ստացել էր Նովոռոսիսկի ազատագրման համար մղվող մարտերում։ Դիվիզիան իր բնույթով ինտերնացիոնալ էր. նրա մեջ կողք-կողքի մարտնչում էին եղբայրական բոլոր ժողովուրդների զավակներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, հայեր, վրացիներ, ղազախներ և այլն, որոնք ռազմաճակատ էին մեկնել երկրի տարբեր վայրերից՝ արտադրական ձեռնարկություններից, համքերից ու կոլտնտեսություններից, սովետական ու պարտիական օրգաններից, կուլտուրական և գիտական հիմնարկ-ձեռնարկություններից։ Այդ երիտասարդ կադրերի մեջ, միակ «ծերունին» եղել է Իջևանցի փոխգնդապետ Բլբուլյանը։

Այդ բոլոր հերոսներին դաստիարակել է պարտիան։ Հեղինակը ճշմարտացի է, երբ նկատում է, թե նայելով այդ խիզախ երիտասարդներին, ինքը մտածում էր այն մասին, թե «Պարտիան ինչպիսի հիանալի երիտասարդություն է աճեցրել»։ Այդպիսի երիտասարդներից են 23-ամյա մայոր Կովեշնիկովը, որի ղեկավարած գունդը առաջին իսկ օրից աչքի է ընկնում մարտական սխրանքներով։ Խմբապետ-փոխգնդապետ Մոզինը, որը ոչ միայն իր գործին հմուտ հայրենասեր է, այլև ամենադժվարին պահին կարողանում է իր ուրախ սրախոսություններով բարձր պահել մարտիկների ոգին։ Գլադկովի գրչի տակ կենդանի մարմնացումն են ստացել շարքային Տոլստոյը, որը առաջին իսկ մարտում շարքից հանում է թշնամու երեք տանկը. բժիշկ Տրոֆիմովը, որը ոչ միայն կարողանում էր գնդակոծության տակ խիզախորեն վիրահատումներ կատարել, այլև պարտիզանական ջոկատի հրամանատարության ղեկը իր ձեռքը վերցնելով, կռվել թշնամու դեմ։ Հիանալի էջեր են նվիրված Գալյանին, Կլենկովսկուն, Խասանովին և շատ ուրիշներին։

Գիրքը հարուստ է նաև հայ դյուցազունների հերոսական սխրանքների նկարագրություններով։ Այդ խիզախներից առանձնապես աչքի են ընկել փոխգնդապետներ Բլբուլյանը, Հովհաննես Խրիստափորի Իվանյանը, դիվիզիայի դատախազ մայոր Ֆրանգուլովը և Հրաչիկ Լևոնի Գրիգորյանը։

Գրքում մեծ տեղ է տրված փոխգնդապետ Գրիգոր Դարչոյի Բլբուլյանի և նրա հրամանատարության տակ գործող գնդի մարտական սխրանքներին։ Բլբուլյանը Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից գտնվել է ռազմաճակատի առաջավոր գծում։ Հայաստանի քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից, պարտիզան Բլբուլյանը ինչպես հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների, դաշնակ-բանդիտների դեմ մղվող կռիվներում, նույնպես հիտլերյան բանդիտների դեմ սովետական ժողովրդի արդարացի պատերազմում իրեն դրսևորումն է որպես լենինյան պարտիային նվիրված կոմունիստ զինվորականի։ Նա կռնկակուխ հետապնդելով ֆաշիստական օկուպանտներին՝ 1945 թ. փետր-

վարին հերոսաբար զոհվում է Լեհաստանում։ Էլտիգենի պլացդարմի համար մղվող մարտերում նա իր ռազմական հմտությամբ, մարտիկներին ոգեշնչելու անօրինակ սխրանքներով աչքի է ընկնում որպես մեր ժամանակի հմուտ սպաներից մեկը։ Նրա հրամանատարության տակ գործող գունդը օրական 6—7 անգամ ետ էր շպրտում մինչև ատամները զինված ֆաշիստական զավթիչների գրոհները։

Էլտիգենի պլացդարմի համար մղվող մարտերում աչքի ընկնող սխրագործություններ է կատարում նաև գվարդիայի ականանետային գնդի հրամանատար՝ փոխգնդապետ Հովհաննես Խրիստաֆորի Իվանյանը, որը փաստորեն գնդի մարտիկներին ափ հանեց առանց նյութական բազայի։ Իվանյանին է հանձնարարվում պլացդարմի հակատանկային պաշտպանությունը։ Փորձված, մարտերում կոփված հայրենասեր Իվանյանը շատ բան է կատարե։ ու անվախ մարտնչել անարգ թշնամու դեմ։

Միհրդատի բարձունքի համար մղված մարտերում և ընդհանրապես թշնամու ուժերի կողմից մոտ 40 օր օղակված 318-րդ դիվիզիայի զինվորների ու սպաների մարտական ոգին բարձր պահելու գործում մեծ դեր է կատարել դիվիզիայի դատախազ մայոր Ֆրանգուլովը (Ֆրանգուլյանը), որը եղել է վերին աստիճանի համարձակ, միշտ գտնվել է բլինդաժներում, տրանշեյներում, զինվորների մոտ, վերջիններիս բացատրել է դրության լրջությունը, ոգեշնչել մարտիկներին։

Գրքի հեղինակը մի առանձին սիրով է խոսում Հրաչիկ Լևոնի Գրիգորյանի մասին, որը մարտական առաջին լուրջ կոփվածքը ստացել է դեռևս Նովորոսիսկ քաղաքի համար մղվող մարտերում։ Հրամանատարությունը ամենակրիտիկական մոմենտներին օգտագործել է նրան որպես բարեխիղճ, սկզբունքային և պարտիային ու կառավարությանը նվիրված կոմունիստի։

Գրախոսվող գրքի առավելություններից պետք է համարել այն, որ հեղինակը ճշմարտացիորեն է ընդգծում պարտիայի դերը. կոնկրետ դեպքում զորամասի պարտիական կազմակերպության դերը զինվորների և սպաների մեջ, թշնամու գերազանց ուժերի կողմից շրջապատման պայմաններում, մարտական ոգին բարձր պահելու, գիտակցական կարգապահությունը բարձրացնելու, իրենց պարտքի գիտակցությունը միշտ նկատի ունենալու խնդիրը։ Քաղդաստիարակչական աշխատանքը դիտվում է որպես մարտական առաջադրանքները կատարելուն ուղղված մի գործոն։ Իրավացի է հեղինակը, երբ գրում է, թե պարտիական ակտիվի խնդիրն էր համոզել զինվորներին գրաված հենակետի պահպանման անհրաժեշտության մեջ և պարտիական ակտիվի խնդիրը հենց այդ համոզմունքը հաստատելն ու զինվորական կարգապահությունը ամրապնդելու մեջ է։

Հայրենական Մեծ պատերազմը շատ բան տվեց սովետական մարտիկներին։ Այդ պատերազմից նրանք հիշում են շատ դառն օրեր, բայց և շատ հերոսական մոմենտներ, որոնք բնորոշում են սովետական մարդկանց հայրենասիրական բարձր հատկությունները, նրանց մարդկային վեհ գծերը։ Հենց այդ վեհ գծերի ընդգծումն ու ցուցահանումն էլ հեղինակի հաջողություններից մեկն է։

Հեղինակը գրքում բերում է Գրիգորյանի 1959 թվականին իրեն գրած նամակներից մեկը, որտեղ ցայտուն կերպով դրսևորված է Էլտիգենի մարտերի մասնակիցների բարձր հայրենասիրությունը։

«Չափազանցություն չի լինի,—գրում է Գրիգորյանը,—եթե ասեմ, որ հիմա էլ հոգեկան մեծ բավականություն եմ զգում էլտիգենյան մարտերի հիշողություններից։ Սովետական մեծ երկրի զինվորների բնավորությունների ինչպիսի հարստություն և ինչպիսի արժանապատվություն»։

Երբ կարդում ենք Գլադկովի գիրքը, իրոք, տեսնում ենք սովետական մարտիկների բնավորությունների այդ հարուստ հոգեգծերը։

Ցանկալի է գիրքը կարդալ հայերեն։

Ա. ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ